ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի
ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 96-Լ

«22» նոյեմբերի 2024թ. — ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով.
Համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի 2024 թվականի նոյեմբերի 22-ի արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հ/Հ Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ	Հ/Հ Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1. Դիանա Գասպարյան				8. Գոհար Նիկողոսյան			
2. Արսեն Պետրոսյան				9. Հրայր Ավետիսյան			
3. Նաիրա Բասենցյան				10. Աննա Կիրակոսյան			
4. Գևորգ Ղազարյան				11. Աղասի Բաղդասարյան			
5. Ներսես Մելիքյան				12. Նորայր Օհանյան			
6. Վարդան Գրիգորյան				13. Էդգար Թամազյան			
7. Կարեն Մովսիսյան				14. Արսեն [illegible]			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
Վաղարշապատ համայնքի ավագանու
Վեցերորդ նստաշրջանի
2024 թվականի նոյեմբերի 22-ի
Արտահերթ նիստի թիվ 96-Լ որոշման

ՕՐԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 97-Ա

«22» նոյեմբերի 2024թ. ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով, 18-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ և 42-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեից տրամադրվող սուբվենցիա ստանալու նպատակով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին բնակավայրի Թումանյան, Պատկանյան, Սոս Մանուկյան, Բաղրամյան փողոցների ասֆալտբետոնե ծածկի հիմնանորոգման, եզրաքարերի փոխարինման սուբվենցիայի ծրագրային հայտը:

2.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման առաջին մասի 2-րդ կետով հաստատված կարգի համաձայն սույն որոշմամբ հաստատված սուբվենցիայի ծրագրային հայտերը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հ/Հ Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ	Հ/Հ Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1. Դիանա Գասպարյան				8. Գոհար Նիկողոսյան			
2. Արսեն Պետրոսյան				9. Հրաչյա Ավետիսյան			
3. Նաիրա Բասենցյան				10. Աննա Կիրակոսյան			
4. Գևորգ Ղազարյան				11. Աղասի Բաղդասարյան			
5. Ներսես Մելիքյան				12. Նորայր Օհանյան			
6. Վարդան Գրիգորյան				13. Եգոր Խաչատրյան			
7. Կարեն Մովսիսյան				14. Արմեն Բալոյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀՀ, 1101, ք.Էջմիածին, Սբ. Մ. Մաշտոցի 0
Հեռ. +374 (231) 53663
Էլ. փոստ: info@ejmiatsin.am

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
МЭРИЯ
ОБЩИНЫ ВАГАРШАПАТ
РА, 1101, г. Эчмиадзин, ул. Св. М. Маштоца
Тел.: +374 (231) 53663
Эл.почта: info@ejmiatsin.am

REPUBLIC OF ARMENIA, ARMAVIR MARZ, MUNICIPALITY OF VAGHARSHAPAT
Address: 0 St. M. Mashtots Str., 1101, Ejmiatsin, RA, Tel. +374 (231) 53663, E-mail: info@ejmiatsin.am

21 նոյեմբերի 2024թ.

ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2024թ. նոյեմբերի 20-ին Վաղարշապատի համայնքապետարանի նիստերի սենյակում տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաներ ստանալու նպատակով 2025 թվականի «Վաղարշապատ համայնքի Էջմիածին բնակավայրի Թումանյան, Պատկանյան, Սոս Մանուկյան, Բաղրամյան փողոցների ասֆալտբետոնե ծածկի հիմնանորոգում, եզրաքարերի փոխարինում» սուբվենցիայի ծրագրի վերաբերյալ հայտի նախնական գնահատման հանրային լսումը:

Հանրային լսումը վարում էր համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանը: Համայնքի ղեկավարը նախ ներկայացրեց հանրային քննարկման թեման և նպատակը, ծանոթացրեց 2025 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների ծրագրին համայնքի կողմից ներկայացված հայտի բովանդակությանը: Համայնքի ղեկավարը նշեց, որ ծրագիրն ընտրելիս հաշվի են առնվել համայնքապետարանի համապատասխան բաժինների կատարած վերլուծությունները, քաղաքացիների դիմումները, ինչպես նաև համայնքի տնտեսական զարգացման տեսանկյունից ասֆալտապատման առաջնայնությունը: «Ներկայացված փողոցները ներհամայնքային փողոցներ են՝ երկկողմանի երթևեկությամբ: Թումանյան փողոցը դեպի Երևան-Արմավիր-Երևան մայրուղի, ինչպես նաև հարակից քաղաքային և գյուղական համայնքներ տանող ճանապարհ է: Բաղրամյան փողոցը Էջմիածին բնակավայրի կենտրոնական փողոցներից է:

Վերը նշված փողոցների նպատակային կիրառությունը կայանում է հետևյալում. այս փողոցներում գործում են մի շարք առևտրի սրահներ, սպասարկման կետեր, որոնք առաջացնում են քաղաքացիների ակտիվ տեղաշարժ տվյալ հատվածներում: Մասնավորապես՝ Թումանյան 9 հասցեում գործում է «Երևան սիթի» մթերային խանութը, նույն փողոցում է գտնվում նաև քաղաքի կենտրոնական շուկան, ինչը ևս առաջացնում է խիտ երթևեկ, կան նաև մի շարք այլ հանրախանութներ: Թումանյան փողոցի 68 շենքում գործում է «Հայաստանի կույրերի միավորման Արմավիրի ուսումնաարտադրական

ձեռնարկություն» ՍՊԸ-ն: Բաղրամյան փողոցի ասֆալտապատման ենթակա տարածքում է գործում Վաղարշապատի Մ. Մաշտոցի անվան թիվ 1 հիմնական դպրոցը: Այս փողոցում է գտնվում Պոլիկլինիկան, ինչպես նաև հարակից է Էջմիածին ԲԿ-ին: Ասֆալտապատվող հատվածը հարակից է նաև Հիվանդությունների վերահսկման և կանխարգելմանազգային կենտրոն ՊՈԱԿ-ին: Պատկանյան փողոցը դեպի գլխավոր ճանապարհ տանող թողոց է, այստեղ գործում է Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 1 «Հասմիկ» մանկապարտեզը: Ասֆալտապատվող Սոս Մանուկյան փողոցը հանդիսանում է Պատկանյան և Բաղրամյան փողոցները կապող ճանապարհ:

Վերոնշյալ փողոցները խիտ բնակեցված են, կան մի շարք բնակելի շենքեր և առանձնատներ: Մարդկանց տեղաշարժը այս երկու փողոցներում և՛ խիտ հետիոտնային է, և՛ անցուդարձային տրանսպորտային միջոցների համար:

Վերոնշյալ փողոցներում առկա են մի շարք անհարթություններ, փոսեր, նստվածքներ, որոնք խորհրդային տարիներից չեն հիմնանորոգվել, տարիներ շարունակ իրականացվել են միայն ճանապարհի հարթեցման և որոշակի մասերի խճապատման աշխատանքներ:

Ասֆալտապատ փողոցները կհեշտացնեն երթևեկը և՛ վարորդների, և՛ հետիոտների համար:

Բարեկարգ ենթակառուցվածքների առկայությունը կյանքի կենսապայմանների բարելավման գրավականն է, ուստի, փողոցների ասֆալտապատման հիմնական նպատակն է ապահովել շահառու հանդիսացող բնակիչների անվտանգ, ապահով և հարմար տեղաշարժվելու հնարավորությունը: Ծրագրի իրականացման անհրաժեշտությունը բխում է հիշյալ փողոցներում հետիոտների և տրանսպորտային միջոցների խիտ երթևեկից, ինչը պայմանավորված է մի շարք բնակելի տների, տնամերձ հողմասերի, հանրակրթական դպրոցների, զբոսաշրջային վայրերի, առևտրի սրահների, մասնավոր այլ ընկերությունների առկայության հետ:

Հիշյալ հանգամանքների առկայությունը ասֆալտբետոնե ծածկ ույթով հիմնանորոգված փողոցներ ունենալու հրամայականն է, ինչը խիստ հրատապ է, քանի որ մայթերի այժմյան վիճակը հետիոտների համար առաջացնում է մի շարք դժվարություններ:

Հիմնանորոգման դեպքում հարմարավետ և բարեկեցիկ պայմաններ կստեղծվեն և՛ դպրոց հաճախող երեխաների, և՛ Պոլիկլինիկա այցելող անձանց, և՛ սպասարկման և առևտրի կենտրոններից օգտվողների, և՛ առհասարակ համայնքի և համայնք այցելող բոլոր քաղաքացիների համար»,– ներկայացրեց Դ. Գասպարյանը:

Հանրային լսման մասնակից Գայանե Պողոսյանը հետաքրքրվեց, թե որքան է կազմում ծրագրի բյուջեն:

Համայնքապետարանի ֆինանսատնտեսական բաժնի պետ Լ. Քալաշյանը պատասխանեց, որ ծրագրով նախատեսվող ծախսերը կապիտալ բնույթի են և կատարվում են համայնքի ֆոնդային բյուջեի հաշվին: Նախնական հաշվարկով ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 394 200 000 ՀՀ դրամ, որից 65%-ը համայնքի մասնաբաժինն է, 35%-ը՝ պետության:

Հարց ու պատասխանի ժամանակ հավելյալ հարցեր չեն հնչել:

Որոշում

Ամփոփելով հանրային լսումը՝ մասնակիցները հավանության արժանացրին 2025 թվականի «ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Վաղարշապատ համայնքի Էջմիածին բնակավայրի Թումանյան, Պատկանյան, Սոս Մանուկյան, Բաղրամյան փողոցների ասֆալտբետոնե ծածկի հիմնանորոգում, եզրաքարերի փոխարինում» սուբվենցիայի ծրագիրը. որոշվեց այն ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու հաստատմանը:

ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՄԱՆ ՎԱՐՈՂ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ՝ Մ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՑԱՆԿ

2025 թվականի պետական բյուջեից տրամադրվող սուբվենցիա ստանալու նպատակով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին բնակավայրի Թումանյան, Պատկանյան, Սոս Մանուկյան, Բաղրամյան փողոցների ասֆալտբետոնե ծածկի հիմնանորոգման, եզրաքարերի փոխարինման սուբվենցիայի ծրագրային հայտ վերաբերյալ հանրային քննարկման մասնակիցների

	անուն/ազգանուն	Էլ.հասցե	հեռախոսահամար	ստորագրություն
1.	Մարիամ Պողոսյան	pogosyan.m1998@gmail.com	094449050	[signature]
2.	Արմինե Օհանյան	armine.ohanyan.83@mail.ru	099920049	[signature]
3.	Մարի Մղդեսյան	mari.mghdesyan@mail.ru	098641687	[signature]
4.	[illegible] Զարյան	zaryan@mail.ru	077897947	[signature]
5.	Մարիամ [illegible]	mariamik18@mail.ru	093933862	[signature]
6.	Սիրանուշ Գևորգյան	gevorgian.siranush@gmail.com	098125638	[signature]
7.	[illegible]	sasmo_art@mail.ru	077-68-40-10	[signature]
8.	[illegible] Ղազարյան	gharazaryan[illegible]@gmail.com	077570736	[signature]
9.	Սոնա Աղաջանյան	aghajanyan.sona84@mail.ru	09427-67-76	[signature]
10.	Ոստան Մարտիրոսյան	vostanmartirosyan@gmail.com	091 107100	[signature]
11.	[illegible]	kar-ycc@mail.ru	094 04 61 18	[signature]
12.	[illegible] Պողոսյան	—	077213573	[signature]
13.				
14.				
15.				
16.				
17.				
18.				
19.				

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 98-Ն

«22» նոյեմբերի 2024թ. գ. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Սահմանել Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հ/Հ Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ	Հ/Հ Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1. Դիանա Գասպարյան				8. Գոհար Նիկողոսյան			
2. Արսեն Պետրոսյան				9. Հրաչյա Ավետիսյան			
3. Նաիրա Բասենցյան				10. Անետ Կիրակոսյան			
4. Գևորգ Ղազարյան				11. Աղասի Բաղդասարյան			
5. Ներսես Մելիքյան				12. Նորայր Օհանյան			
6. Վարդան Գրիգորյան				13. Էդգար Թամազյան			
7. Կարեն Մովսիսյան				14. Արմեն Դանիելյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Վաղարշապատ համայնքի ավագանու
2024 թվականի նոյեմբերի 22-ի
թիվ 98-Ն որոշմամբ

ԿԱՆՈՆՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կանոններով սահմանվում են Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում գտնվող բոլոր տեսակի իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից հանրային սննդի կազմակերպման ու իրականացման կանոնները:

2. Սույն կանոններում օգտագործվող հասկացություններն են՝

1) **հանրային սնունդ** (սննդի ապահովման ծառայություններ)՝ խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և (կամ) սպառման կազմակերպում,

2) **հանրային սննդի ծառայություն**՝ սպառողների սննդի և հանգստի անցկացման պահանջների բավարարմանն ուղղված, վաճառողի միջոցով մատուցվող ծառայությունների համալիր,

3) **խոհարարական արտադրանք**՝ կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների և կիսապատրաստվածքների համախումբ,

4) **ճաշացուցակ**՝ կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի, գնովի ապրանքների ցուցակ, որը վաճառողն առաջարկում է սպառողին՝ զանգվածի և գնի նշումով,

5) **հանրային սննդի օբյեկտներ**՝ հանրային սննդի ծառայության իրականացման համար կառուցված կամ այդ նպատակին հարմարեցված ու սարքավորված շենք, շինություն կամ այլ վայր,

6) **վաճառող**՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որն աշխատանքներ է կատարում խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և (կամ) սպառման կազմակերպման ուղղությամբ:

3. Հանրային սննդի օբյեկտները դասակարգվում են հետևյալ տեսակների՝

1) ճաշարաններ,
2) ռեստորաններ,
3) սրճարաններ,
4) բարեր,
5) բուֆետներ,
6) խոհարարական արտադրանքի պատրաստման և իրացման այլ օբյեկտներ:

4. Հանրային սննդի կազմակերպման և իրացման համար իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը պարտավոր են ստանալ թույլտվություն, որը տրվում է համայնքի ղեկավարի կողմից, համայնքի ավագանու սահմանած չափով տեղական տուրքը վճարելու դեպքում:

5. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի տեխնոլոգիական գործընթացն ապահովող համապատասխան սարքավորումներով և հանրային սննդի գործունեությունն իրականացնելու համար նախատեսված գույքով:

6. Բոլոր տեսակի հանրային սննդի օբյեկտները պետք է ունենան դեպի օբյեկտի մուտք տանող մատուցային և հետիոտնային ճանապարհներ, անհրաժեշտ տեղեկատվական ցուցակներ, սանհանգույցներ:

7. Հանրային սննդի օբյեկտներում թույլատրվում է ալկոհոլային խմիչքների լցնովի վաճառք՝ համայնքի ղեկավարի կողմից անհատ ձեռնարկատերերին կամ իրավաբանական անձանց տրված թույլտվության դեպքում:

8. Թույլտվությունը տրվում է յուրաքանչյուր օբյեկտի համար առանձին՝ համայնքի ավագանու սահմանած չափով տեղական տուրքը վճարելու դեպքում:

9. Ուսումնական հաստատություններում, մանկական և բուժկանխարգելիչ կազմակերպություններում գործող հանրային սննդի օբյեկտներում արգելվում է ալկոհոլային խմիչքների իրացումը:

10. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պահանջները բավարարող ցուցանակով:

11. Օրենքով սահմանված շինությունների ներսում հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներին ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվությունը տրվում է համայնքի ղեկավարի որոշմամբ՝ համայնքի

ավագանու կողմից սահմանված չափով տեղական տուրքը յուրաքանչյուր օբյեկտի համար առանձին վճարելու դեպքում:

12. Համայնքի տարածքում բազմաբնակարան բնակելի շենքերում տեղակայված հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներին ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվություն չի տրվում:

13. Վաճառողն ինքնուրույն է որոշում սպառողներին սպասարկելու ձևերը և մեթոդները:

14. Վաճառողը պետք է ունենա ճաշացուցակ, որը ներկայացվում է սպառողին (գնորդին):

15. Ճաշացուցակում նշվում է խոհարարական արտադրանքի զանգվածը և վերջինիս այն գինը, որը ենթակա է սպառողի կողմից վերջնական վճարման:

16. Վաճառողը յուրաքանչյուր աշխատողին ապահովում է իր ստորագրությամբ հաստատված անվանաքարտով՝ աշխատողի լուսանկարով, անվան, ազգանվան և ազգային ստանդարտին համապատասխան պաշտոնի նշմամբ:

17. Անհատ ձեռնարկատեր հանդիսացող վաճառողը պարտավոր է կրել անվանաքարտ՝ իր լուսանկարով, անվան, ազգանվան և անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարի նշմամբ, իսկ անհատ ձեռնարկատիրոջ մոտ աշխատողի անվանաքարտի վրա լրացվում է՝ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, պետական հաշվառման համար, աշխատողի անունը, ազգանունը, աշխատողի զբաղեցրած պաշտոնը: Անհատ ձեռնարկատեր հանդիսացող վաճառողի անվանաքարտի վրա, պաշտոնի փոխարեն, կատարվում է «Անհատ ձեռնարկատեր» նշումը:

18. Անվանաքարտ կրում են համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտի աշխատողները՝ աշխատավայրում գտնվելու ժամանակահատվածում:

19. Անվանաքարտն աշխատողին տրվում է աշխատանքի ընդունման հրամանի հետ կամ աշխատանքային պարտականությունների անցման պահին:

20. Անվանաքարտի վրա հայերեն տպագիր տառերով լրացվում է՝

ա) կազմակերպության ֆիրմային անվանումը,

բ) աշխատողի անունը, ազգանունը,

գ) աշխատողի զբաղեցրած պաշտոնը:

21. Անվանաքարտը պետք է պարունակի աշխատողի գունավոր լուսանկարը՝ նվազագույնը 30մմ x 40մմ չափերով:

22. Անվանաքարտը հաստատվում է գործատուի ստորագրությամբ:

23. Անվանաքարտը աշխատողը կրում է իր արտահագուստի կամ հագուստի վրա, կամ այն դրվում է արտահագուստի վրա թափանցիկ նյութից կարված գրպանիկի մեջ:

24. Անվանաքարտ կրելու կարգը սահմանված է «Հայաստանի Հանրապետության տարածքում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում անվանաքարտ կրելու կարգը հաստատելու մասին» ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 29 օգոստոսի 2005 թվականի N 182-Ն հրամանով:

25. Վաճառողն ապահովում է հանրային սննդի օբյեկտի աշխատողների աշխատանքային արտահագուստ կրելը:

26. Աշխատողներից խոհարարը, հրուշակագործը պետք է ունենան համապատասխան մասնագիտական կրթության կամ մասնագիտական պատրաստվածության մասին դիպլոմ կամ վկայական:

27. Մասնագիտական պատրաստվածության ծրագրերը համաձայնեցվում են կրթության, ինչպես նաև առևտրի և ծառայությունների ոլորտների համապատասխան լիազոր մարմինների հետ:

28. Մատուցողի ներկայացրած հաշվում (որի երկրորդ օրինակը սահմանված կարգով մնում է վաճառողի մոտ) նշվում են նրա ազգանունը, սպասարկման օրը, կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի, գնովի ապրանքների անվանումները, քանակը, զանգվածը և վճարման ենթակա վերջնական գինը:

29. Հանրային սննդի ոլորտին վերաբերվող այն նորմերը, որոնք սահմանված չեն սույն կանոններով, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության գործող իրավական ակտերով:

30. Սույն կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողությունը իրականացվում է համայնքի ղեկավարի հանձնարարությամբ՝ համայնքապետարանի աշխատակազմի միջոցով, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով՝ լիազոր տեսչական մարմնի միջոցով:

31. Սույն կանոնների խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

<<11.11.2024թ.>> ք. Էջմիածին

Սույն թվականի նոյեմբերի 11-ին՝ ժամը 11:00-ին՝ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը ՀՀ Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածնի վարչական շենքում տեղի ունեցավ համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման եւ իրականացման վերաբերյալ հանրային քննարկում:

Ելույթ ունեցան՝

Ս. Գեւորգյանը
Ներկայացրեց, որ սույն թվականի նոյեմբերի 11-ին ժամը 11.00-ին ՀՀ Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածնի վարչական շենքում տեղի է ունենում Վաղարշապատ համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման եւ իրականացման վերաբերյալ հանրային քննարկում:

Կ. Սմբատյան
Ներկայացրեց Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում գտնվող բոլոր տեսակի իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից հանրային սննդի կազմակերպման ու իրականացման կանոնները:

Դիտողություններ եւ առաջարկություններ

Չկան

Հանրային քննարկման արդյունքում մասնակիցները որոշեցին՝

Հավանություն տալ նախատեսվող կարգավորմանը

Քննարկվող պատասխանատու -

Վարող -

Ձեռնարկող -

Արձանագրող -

ՑԱՆԿ

Վաղարշապատ համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման եւ իրականացման վերաբերյալ հանրային քննարկման մասնակիցների

Անուն Ազգանուն	Էլեկտրոնային հասցե	Հեռախոս	Ստորագրություն
Վարդիկյան [illegible]	Vardikyan1979@mail.ru	099028666	[signature]
Մուրադյան Զինա[illegible]	a.muradyan1987@mail.ru	091.76.66.07	[signature]
Պապիկյան Նարեկ	PAPIKYANNAREK81@GMAIL.COM	096-05-00-81	[signature]
[illegible] Վարդան	vardan-9912@mail.ru	077-75-99-22	[signature]
Հովհաննիսյան [illegible]	merine-0000 email.ru	093 08-71-61	[signature]
Վասպուրյան [illegible]	vaspur2018@mail.ru	077 82 88 16	[signature]
Եղիազարյան Հովհաննես	Hovhannes77@mail.ru	055-33-45-33	[signature]
[illegible] Կանինյան	nkaninyan@mail.ru	094-17-45-45	[signature]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010 Երևան Վ. Սարգսյան 3/8

N //46578-2024
«18» նոյեմբերի 2024թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՏԻԿԻՆ ԴԻԱՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Գասպարյան,

Ի պատասխան Ձեր՝ 2024 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 5193 գրության՝ կից ներկայացվում է «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները սահմանելու մասին» և «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոններ սահմանելու մասին» որոշումների նախագծերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ,

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

Կատարող՝ Մելինե Դոլխանյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. /010/ 594127

11/18/2024

X

ՏԻԳՐԱՆ ԱՐԵՅԱՆ

Signed by: AREYAN TIGRAN 3014720305

ՏԻԳՐԱՆ ԱՐԵՅԱՆ

արադատության
նախարարություն

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները սահմանելու մասին» և «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոններ սահմանելու մասին» որոշումների նախագծերի վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները սահմանելու մասին» և «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոններ սահմանելու մասին» որոշումների նախագծերի չհամարակալված պարբերություններն անհրաժեշտ է համարակալել՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի պահանջները:

Իրավական ակտերի փորձաքննության
գործակալության պետ՝

11/15/2024

X

ԷՄԻԼ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Signed by: MARGARYAN EMIL 4014910245

ԷՄԻԼ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոններ սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պետական փորձագիտական եզրակացությամբ արված դիտողությունների և առաջարկությունների

1. Արդարադատության նախարարություն	18.11.2024թ. N°//46578-2024 գրության
1. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոններ սահմանելու մասին» որոշման նախագծի չհամարակալված պարբերություններն անհրաժեշտ է համարակալել՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի պահանջները	Ընդունվել է.